ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի՝ Իտալիայի Հանրապետություն (Հռոմ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սրբուհի Գալյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), 2019 թվականի սեպտեմբերի 16-ից սեպտեմբերի 21-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Իտալիայի Հանրապետության Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություն ֆինանսական գվարդիայի գլխավոր հրամանատարություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Իտալիայի Հանրապետության ֆինանսական գվարդիայի գլխավոր հրամանատարություն և կորպուսի այլ գերատեսչություններ իրականացվելիք այցին՝ կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած իրավապահ կառույցների միջև համագործակցության հաստատման և ընդլայնման նպատակով:

Քննարկված թեմաները՝ Այցի շրջանակներում քննարկվել են Իտալիայի ազգային հակակոռուպցիոն մարմնի, Ֆինանսական գվարդիայի և Կարաբինիերների բանակի՝ կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, այդ թվում՝ փողերի լվացման դեմ պայքարի փորձը և քրեական գործերի քննության ընթացքում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման հնարավորությունը, ինչպես նաև արդի տեխնոլոգիաների դերը երկրից ապօրինի դուրս բերված ակտիվների վերադարձի հարցում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունը հանդիպել և քննարկումներ է ունեցել Ֆինանսական գվարդիայի գլխավոր հրամանատարության շտաբի պետ, գեներալ Ումբերտո Սիրիկոյի, Կազմակերպված հանցագործությունների քննության կենտրոնական ծառայության, Ֆինանսական գվարդիայի հակակոռուպցիոն հատուկ և արժույթի քաղաքականության հատուկ բաժինների աշխատակիցների հետ: Ակտիվների վերականգնման և կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված մասնագիտական քննարկումներ են կայացել նաև Իտալիայի Հանրապետության Կարաբինիերների գլխավոր հրամանատարության շտաբի պետ գեներալ Տեո Լուցիի հետ: Հայկական պատվիրակությունը այցելել է հանցավորության դեմ պայքարի կենտրոնական ծառայություն /հատուկ բաժին/ և Կարաբինիերների բանակի

օպերատիվ կառավարման կենտրոն: Այցի շրջանակներում հայկական պատվիրակությունն հանդիպել է նաև Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Վիկտորիա Բաղդասարյանի հետ:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային այցի շրջանակներում Կարաբինիերների բանակի գլխավոր հրամանատարության և Ֆինանսական գվարդիայի գլխավոր հրամանատարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրավապահ ոլորտի համագործակցության շրջանակներում փոխըմբռնման հուշագրեր կնքելու վերաբերյալ:

ՀՀ արդարադատության

X _____

նախարարի տեղակալ՝

Սրբուհի Գալյան